ԱՐՈՒԵՍՏ

Ժանգառ՝ շինելու կերպը ։

ԺԱՆԳԱՌԸ խիստ շատ կը գործածեն ներկարարները, պատկերհանները, յախճապակի շինողները, ապակեգործներն ու խաղալիքորդները ։ Ասիկայ պղընձի ժանգ է որ արհեստով կը հանեն. ամենէն շատ Գաղղիայէն կուգայ և Մոնփելիէ գաւառինը շատ աղէկ է. Գերմանիոյ ալ Վիեննայէն ու Համպուրկէն եկածները գէշ չեն ։ Ժանգառին գոյնը կանաչ է, ծակ ծակ, հատիկ հատիկ, և համը կծու ու սիրտ խառնող. և աս կերպով կը շինուի. առաջ պղինձը բարակ թիթեղ դարձընելու է տաք տաք զարնելով. ետքը երկայն բարակ կտրելու է, երկայնքը կէս ոտնաչափ, լայնքը չորս մատնաչափ ։ Անկեց ետքը ամանի մը մէջ դնելու է կարգ մը կոխած խաղող², կարգ մըն ալ աս պղնձէն, այնչափ որ ամէն կողմը ու բոլոր երեսը կոխած խաղողին դպչի. ետքը նորէն խաղող՝ նորէն պղինձ դնելու է ինչուան որ ամանը լեցուի. և որչափ որ աս ճզմած խաղողին մէջի հիւթը առատ է, այնչափ ալ քիչ հարկ կ'ըլլայ դնել ։

Աս ճզմուած խաղողը կը սկսի թըթուիլ և կամաց կամաց պղնձին ալ կ'ազդէ և իրեք կամ վեց ամսուան մէջ բոլոր պղինձը կը քայքայի, ու թէ որ անուշ է խաղողդ՝ աւելի դիւրաւ կը ներգործէ ։ Պարզ քացախով շինուածը միշտ ստորին աստիճանի սեպուած է ։

Նոր խաղողն ալ կրնայ գործածուիլ աս բանիս. բայց ողկոյզները ութը օրի չափ ուժով գինիի մէջ կը ձգեն՝ անանկ որ սկսի թթուիլ, բայց բոլորովին քացախ չդառնայ. վերջը հողէ չապիկած ամանի մը մէջ կը դնեն գինիով մէկտեղ, աս ամանին վրայ ալ հաճարի յարդէ շինած խուփով կը գոցեն ։ Երկու օրը մէյմը աղէկ մը զանոնք կը խառնեն ինչուան որ սկսի թթուիլ ու գինին ալ պղտորիլ. ան ատենը գինին կը քամեն և խաղողն ալ պղնձին հետ կարգ կարգ ամանի մը մէջ կը շարեն. միայն թէ աս պղինձները առաջուց տաքցուցած պիտի ըլլան. ետքը աս ամանին վրայ ալ վերի ըսած խուփով կը ծածկեն և երկու օր հանդարտ կը թողուն ։ Երբոր պղինձները սկսին կանաչնալ, ան ամանէն կը հանեն և ուրիշ ամանի մը մէջ դնելով վրան գինի կը լեցընեն ու շտեմարանին մէջ կը պահեն, ետքը կը թողուն որ գինին քամուի, յետոյ ան թիթեղները կը չորցընեն ։ Աս բանս քանի մը անգամ կրկնելով պղինձներուն վրայ կանաչ ժանգ կը կապէ որն որ դանակով մը վրայէն կ'առնեն և տաշտի մը մէջ քիչ մը գինի լեցընելով ու աս ժանգն ալ մէջը խառնելով զանգուած մը կը շինեն. ետքը աս զանգուածը հովդըրպուկ տեղ մը դնելով կը չորցընեն և պզտի պզտի կը կտրեն ։ — Գաղղիոյ ժանգառը մութ կանաչ կ'ըլլայ, չորնալով գոյնը չընետեր. գործածելու համար քացախով կամ որթի արցունքով[1] կը զանգեն ։ Հոլանտացիք ժանգառը թորանոցէ[2] անցընելով կը բիւրեղացընեն և խիստ աղուոր կանաչ կ'ըլլայ, գործածելու ատեն վրան տաք ջուր լեցընելով կը լուծուի ։

1 Տճ. Ժէնկեար ։

2 Ճիպրէ ։

1 Որթի արցունք կ'ըսուի յօտելէն ետքը կաթկըթած մաքուր ջուրը ։

2 Սիւզէկ ։

Թէ որ մէկը սիրտդ ցաւցընէ կամ վնաս մը ընէ, ըրած չարիքը որչափ մեծ ալ ըլլայ՝ մէկէնիմէկ վրէժխնդրութիւն ընելը շատ գէշ բան է. մէկ օր մը առանց վրէժ խնդրելու անցուր, և շատ անգամ կը տեսնես որ առջի օրը մեծ կարծուած նախատինքը օր մը անցնելէն ետքը կարծածէդ աւելի կը պզտիկնայ ։

ՓԱՆԱՌ